# ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանն աշխատանքային այց է կատարել Ապարան խոշորացված համայնքի Արագած բնակավայր

ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանն այսօր աշխատանքային այց է կատարել Ապարան խոշորացված համայնքի Արագած բնակավայր, որտեղ ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Այսեր Ղազարյանի և Գեղարոտ գետի վրա կառուցված փոքր ՀԷԿ-երի պատճառով առաջացող խնդիրները ուսումնասիրելու նպատակով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի այլ անդամների հետ տեղի ունեցավ աշխատանքային քննարկում համայնքի բնակիչների մասնակցությամբ:

Հանդիպման նպատակն էր խնդրի շուրջ իրականացվող փորձագիտական ուսումնասիրություններ կատարելու համար տեղանքում իրականացվող աշխատանքներին համայնքից ներկայացուցիչներ ներգրավելու, աշխատանքային խմբի բնականոն գործունեությունը ապահովելու վերաբերյալ հարցերի քննարկումը:

Մարզպետ Դավիթ Գևորգյանը ներկայացրել է միջգերատեսչական խմբի անդամներին և նշել է, որ խմբի ստեղծման նպատակն է ուսումնասիրել, թե ՀԷԿ-ի գործունեությունը ինչ հետևանքներ է ունենում բնապահպանական տեսանկյունից, ինչ ազդեցություն է թողնում գյուղատնտեսության, հողերի, ջրի որակի վրա: Նա միաժամանակ նշել է, որ իրականացվելու է օբյեկտիվ ուսումնասիրություն, որից հետո միայն հնարավոր կլինի իրավական ճանապարհով հիմնավորել ՀԷԿ-ի գործունեության ազդեցությունը էկոհամակարգի վրա:

Որպես իրականացվող հետազոտությունների պատասխանատու գերատեսչության ներկայացուցիչ՝ ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Այսեր Ղազարյանը ներկայացրեց միջգերատեսչական աշխատանքային խմբի առջև դրված խնդիրները, ինչպես նաև ՀԷԿ-ի գործունեության հետ կապված առաջարկներ:

Հանդիպման ընթացքում ‹‹Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն›› ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Գայանե Շահնազարյանը ներկայացրեց նախատեսվող հետազոտական մոնիթորինգի համար իրենց կողմից ընտրված դիտակետերը, աշխատանքների կազմակերպման սկզբունքները, քայլերի հաջորդականությունը:

Բնակիչներին բացատրվել է, որ առաջիկա ամիսների ընթացքում, հաշվի առնելով գետի սնուցման ռեժիմները, ակունքից մինչև գետաբերան իրականացվելու է նմուշառում՝ ՀԷԿ-երի մուտքից-ելքից, գետի տարբեր հատվածներից: Նշված ամբողջական տվյալներն ունենալով միայն հնարավոր կլինի եզրակացություն տալ, թե ՀԷԿ-երի աշխատանքային, ոչ աշխատանքային շրջաններում, բոլոր ամիսներին, սեզոններին ՀԷԿ-ի գործունեությունն ինչպես է ազդում ջրի որակի վրա:

Քննարկման արդյունքում որոշվեց միջգերատեսչական աշխատանքային խմբում ընդգրկել համայնքի 4 ներկայացուցիչ, որոնք ներկա կգտնվեն մոնիթորինգային երկու դիտակետերի՝ Արագած համայնքի վերին հատվածից և Գեղարոտ գետի գետաբերանի մոտից փորձանմուշներ վերցնելու գործընթացին և կմասնակցեն հետագա աշխատանքներին:

Միաժամանակ հայտնում ենք, որ հաշվի առնելով աշխատանքային խմբի համակարգումն իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարությունը, ուստի իրականացվող

աշխատանքների մասին լրացուցիչ պարզաբանումներ և տեղեկատվություն ստանալու համար կարող եք դիմել պատասխանատու գերատեսչությանը: